

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԿՕՆՖԵՐԱՆՍԻ ԱՌԱՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԻՐԱԿՐԻՔԵԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ  
ԿՕՆՖԵՐԱՆՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՅՈՒՇԱԳՐԻ  
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ Ե. Պ.

925

9(47.925)  
Հ-25

1919

Տպ. «Աշխատար», Գորվ. 39  
Ք Ի Ֆ Լ Ի Ս

SEP 2011

9197.9257  
Σ-25

№ 15.

«ԱՇԽԱՏԱԻՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ

№ 15.

SEP 2011

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՌԱՋ

ՀԱՅԿԱԿԱ ՊԱՏԻԻՐԱԿՐԻՔԵԱՆ ՀԱՇՏՈՒՔԵԱՆ  
ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՅՈՒՇԱԳՐԻ  
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ Ե. Պ.

1919

Տպ. «Աշխատանք», Գոյով. 39

Ք Ի Ն Լ Ի Ս

13 SEP 2013

10, 189

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ց Ը

## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԿՕՆՖԵՐԱՆՍԻ ԱՌԱՋ

(Թարգմանած Հայ Պատերազմի ժամանակահատվածի Հայաստանի Կոնֆերանսին ներկայացրած յուշագրի Ֆրանսերեն բնագրից, որը առանձին գրքույկով հրատարակված է Պարիզում):

Հայ ազգի անունից, որի ընտրված պատերազմիկները, գալով Հայաստանից ու աշխարհի բոլոր մասերից, ներկայումս կոնֆերանս են գում ընել Պարիզում, Հայոց Ազգային Պատերազմիկները, պատիւ ունի Հայաստանի Կոնֆերանսին ներկայացնելու ներկայ յուշագրի, որ ամփոփում է հայ ազգի տենչերն ու պահանջները:

Մեր ազգը, շարունակ ճնշելուց յետոյ, այսօր, համաշխարհային վերիվայրումի վախճանին, գտնուում է պատանու-պատանու եղած ու արին քամ վիճակում, բայց կենդանի և աւելի քան երբէք վառ հաւատով հակամարտ ազատագրելու և իրականացնելու համար իր ազգային իղէալը՝ շնորհիւ դաշնակից պետութիւնների յաղթանակին, որոնք իրենց զրօշների վրայ մակազրել են Իրաւունքի, Արդարութեան և Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները:

Հիմնելով այդ վսեմ սկզբունքների վրայ՝ Հայոց Ազգ. Պատերազմիկները Թարգմանը հանդիսանալով միաձայն

բաղձանքի ամբողջ ազգի, որի մի մասն արդէն անկախ հանրապետութիւն է հիմնել Կովկասում, յայտարարեց ամբողջ Հայաստանի անկախութիւնն ու իր 1918 թ. նոյեմբերի 30-ի յայտագրով այդ մասին զեկուցեց դաշնակից կառավարութիւններին:

Հայաստանն իր անկախութեան իրաւունքը ձեռք է բերել կամովին և ի ընդերարար մասնակցելով պատերազմին՝ Կովկասեան, Սիւրիական և Ֆրանսիական երեք ճակատների վրայ, և հա իւր հազարաւոր տղամարդկանցով կանանցով ու երեխաներով, որոնք ընկան՝ որպէս համաձայնութեան պետութիւնների դատին իր հաւատարմութեան զոհերը, որովհետեւ Հայաստանը, սկզբից և եթ, այդ նկատել է որպէս իր սեփական դատը Հայաստանն իր հակայական զոհերով ռազմաբեմերում, կոտորածի դաշտերում և տեղացիանութիւնների երկար ճամբաներին՝ մահաւանդ վճարել է այնպիսի ծանր տուրք, որպիսին ոչ մի ուրիշ պատերազմող ազգ չի տւել:



1043-98

Դաշնակիցների յոյթանակը նրան ազատեց ճնշողների լուծից և նրա զբոսախաղները կը բաւէին արգարացնելու նրա անկախութեան իրաւունքը. բայց, ինչպէս ստորև կապացուցւի, նա ունի և պատմական, ազգագրական, քաղաքական ու բարոյական բնոյթ կրող այլ իրաւունքներ, որոնք նազ կարևորութիւն չունին:

\* \* \*

Երկար ժամանակ, Տաճկաստանի նկատմամբ եւրոպական պետութիւնների քաղաքականութեան մէջ իշխող տեսակէտն է եղել օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը: Եւրոպական մեծ պետութիւնները, հաշտեցնելու համար Տաճկաստանի ամբողջականութիւնն ու թիւրքերի կողմից ճնշւած քրիստոնեայ ժողովուրդների հանդէպ իրենց զգացած պարտականութիւնները, շտապում էին «ռեֆորմներ» խոստումներ ոչ թիւրք ժողովուրդների համար՝ որպէսզի նրանք վայելեն հաւասար վերաբերմունք (օրէնքի կողմից), առանց ցեղի կամ դաւանանքի խտրութեան:

Փաստերը ցոյց տւին, թէ սրբան խախտա հիմքի վրայ էր դրւած այդ յոյսը: Թիւրքերը, ծեր թէ երիտասարդ, ռեֆորմների մէջ տեսել են միայն Եւրոպան խաբելու մի միջոց և գործնականում, ճարպիկօրէն օգտագործելով պետութիւնների հակամարտութիւնները, նրանք կարողացել են այնպէս սարքել, որ խուսափեն այդ ռեֆորմներից: Քրիստոնեայ ժողովուրդներն այդ կերպով կասկածելի դառնալով Դաւան աչքին, զրանով աւելի դժբախտացան, քան ինչ որ էին

օսմանեան պետութեան գազաթնակէտի վրայ գտնւած ժամանակ:

Վեց դարուց ի վեր օսմանեան տիրապետութեան տակ Հայաստանի պատմութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մի երկար մարտիրոսագրութիւն, պարբերական կոտորածներով: Այդ հալածանքներն առանձնապէս դժանբնոյթ ստացան վերջին յիսուն տարւայ ընթացքում՝ այն ժամանակից, երբ հայերը պահանջեցին բարելաւել իրենց վիճակը:

Սան-Ստեֆանօի (1877 թ.) և Բերլինի (1878 թ.) դաշնագրերը, Կիպրոսի պայմանագիրը, 1895 թ. դեպանների կողմից Դաւան ներկայացուցւած բարենորոգումների ծրագիրը միջազգային ակտեր են՝ թիւրքական ռեֆորմի ապօրինութիւնները վերացնելու համար: Պարզեց, որ նրանք ամենք էլ անբաւարար են, քանի որ եւրոպական զիւանագիտութիւնը միշտ էլ բաւականացած է կիսամիջոցներով: Ամեն անգամ, որ Եւրոպան խօսել է ռեֆորմների մասին, թիւրքիան պատասխանել է կոստրածներով, և Եւրոպան լռել է:

1908 թ. հայերն ամեն կերպ աջակցում են երիտասարդ-թիւրքերին՝ տապալելու բռնապետութիւնը: Երիտասարդ-թիւրքերը նրանց օգնութիւնը ձեռք բերելու համար խօստացել էին «պատմութեան, հաւասարութեան ու եղբայրութեան» մի դարաշրջան: Հայերը հաւատացին այդ խոստումներին: Մի տարի չանցաւ, որ տեղի ունեցան Ադանայի կոտորածները և մօտ 20,000 հայեր կոտորեցին: Բայց թիւրքիայի ամբողջականութեան պահպանման քաղաքականութիւնն այս անգամ էլ է

արգելում պետութիւնների միջամտութիւնը:

Միայն 1912—1913 թւականներին, բալկանեան պատերազմներից յետոյ, բալկանեան հարցը լուծելու համար գումարւած Լոնդոնի կոնֆերանսի ժամանակ է, որ մեծ պետութիւնները պատասխանելով ամբողջ հայ ազգի թախանձանքներին, միջամտեցին Դաւան մօտ՝ ձեռք բերելու համար Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածում յիշւած բարենորոգումների գործադրութիւնը:

Պոսի դեպաններին յանձնարարեց մշակել մի նախագիծ և խմբագրել նրա վերջնական բնագիրը: Երկար ու փութաշան բանակցութիւններ վարեցին Դաւան ընդդիմութիւններին յաղթելու համար: Վերջիվերջոյ նրան ընդունել տւին մի բնագիր, որը սակայն կրճատւած և այլանդակւած էր՝ միջամտութեամբ Գերմանիայի, որ չէր դադարել աջակցելուց տաճկական զիւանագիտութեան: Երիտասարդ թիւրքերը փութացին պատռել այդ համաձայնութիւնը, որ ստորագրւել էր 1914 թ. ֆետր. 8-ին, հենց որ Դերմանիան առաջ բերաւ պատերազմը: Դա չարգելեց, որ երիտասարդ-թիւրքերը մի անարժան համաձայնութիւն տուարկէին հայերին. նրանք առաջարկում էին միանալ թաթարներին հետ՝ ապստամբելու համար Ռուսաստանի դէմ, և փոխարէնը Դուռը աւտոնոմիա պէտք է տար հայերին: Գերմանիան երաշխաւոր էր դառնում իր զինակից առաջարկին: Հարկ կայ տեսնու, որ հայերը զգանքով պատասխանեցին: Երիտասարդ-թիւրքերի էզրթնգրութիւնը, սառնօրէն ծրա-

գրւած, նախօրօք յայտարարւած, սարսափելի եղաւ:

Մենք չենք պատմելու ոչ կոտորածները, ոչ տեղահանութիւնները, որոնց դիմակի տակ կատարեցին կոտորածները: Դրանց նկարագրութիւնները, ջախջախիչ վկայութիւններով հաստատւած, կարելի է գտնել լորդ Բրաւայի կողմից պարլամենտին ներկայացւած Կապոյտ-գրքում, Մ. Մորգընտաուի և Մ. Է. Այնշտայնի գրքերում, նոյն իսկ գերմանների գրած բրոշիւրներում, ինչպիսիք են՝ դոկտ. Նիեպօրի տեղեկագիրը, Պարիզում նոր հրատարակւած դոկտ. Լեպսիուսի բրոշիւրը, Հարբի Շտիւրմերի գիրքն և այլն: Բայց կարևոր է մանաւանդ շեշտել, որ ամբողջ մի ազգի բնաջնջման գործը մեթոդիկ կերպով կազմակերպւած է կառավարութեան կողմից, որի հրամանները շրջաբերականներով ու հեռագրներով հաղորդւած են հայկական բոլոր վիլայէթների պաշտօնեաներին: Այդ փաստաթղթերից շատերը գտնւած են և հրատարակւած:

Կառավարութիւնն ոչինչ չէ թողած դիպւածի քմահաճոյքին—ոչ սպանութիւնները, ոչ կոզոպուսները, ոչ չարչարանքները, ոչ բռնաբարութիւնները, ոչ բռնի իսլամացումները, ոչ սովմամանութիւնը:

Այդպիսի փորձութիւններից յետոյ մեր դատը լուեց. Դաշնակիցներն արդէն իրենց պետական մարդկանց հանգիստուր յայտարարութիւններով յանձնառու են եղել Հայաստանը վերջնականապէս ազատագրելու պատմութեան մէջ անօրինակ մի բռնապետութիւնից: Ժողովուրդների պատերազմը, որի հետեւեց ժողովուրդների խաղաղութիւ-

ների պաշտպանութեան տակ:

Միաժամանակ պիտի նկատել, որ քիւրդերից շատերը հայկական ծագում ունին և տաճկական ազգեցութիւնը սահմանափակելուն պէս՝ հեշտ կը լինի համեքաշխութիւն հաստատել հայ և քիւրդ ցեղերի միջև. հայերն այդ դէպքում կոչւած կը լինեն քիւրդերին վայելել տալու քաղաքակրթութեան բարիքները՝ յօգուտ երկու ժողովուրդներու փոխադարձ շահերի:

Ինչ վերաբերում է թափառաշրջիկներին, յատուկ օրէնքներ կը կանոնաւորեն ամառային արօտատեղիներում (եայլաղ) խաչնարածութեան պայմանները՝ ապահովելու համար երկրի ապահովութիւնն ու արգելելու աւերումները:

\* \* \*

Վերոյիշեալ սկզբունքների համաձայն, անկախ պետութիւնը պէտք է կազմել հետեւալ հայկական շրջաններից.

1. Վանի, Բիթլիսի, Իրարբէքերի, Խարբերդի, Սըւազի, Էբզրումի և Տրապիզոնի եօթ վիլայէթները (համաձայն 1914 թ. բարենորոգումների պատի), դուրս ձգելով Տիգրիսից հարաւ և Օրդու-Սըւազ զծից արևմուտք գտնւած շրջանները:
2. Կիլիկիան չորս սանջակները, այսինքն՝ Մարաշ, Խոզան (Սիս), Ալէքէ-Բէքէքէթ և Աղանա՝ Ալէքսանդրեաթի հետ միասին:
3. Կովկասի հայկական հանրապետութեան ամբողջ տերրիտորիան, որ պարունակում է. Երևանի ամբողջ դաւառը, նախկին Թիֆլիսի նահանգի հարաւային մասը, Գանձակի նահանգի հարաւարևմտեան մասը. Ղարսի

դաւառը (բացի Արդահանից հիւսիս գտնւած շրջանից): (Տես քարտէզը):

Գալով սահմաններին, պէտք է յիշեցնենք, որ երբ Արդիւլ Համիդը գծել տւեց վիլայէթների վարչական սահմանները, կարգադրեց, որ կամայականօրէն նրանցից իւրաքանչիւրին կցւեն ոչ հայկական շրջաններ, այնպէս որ մահմեդականները մեծամասնութիւն կազմեն: Այդ նոյն դիտաւորութեամբ՝ նա հայաբնակ շրջաններում հաստատեց չէքքէզների և Ռուսաստանից կամ Բալկաններից տեղափոխւած այլ մահմեդականների գաղութներ: Ուստի հարկ կը լինի սահմանների ընդհանուր վերաբնութիւն կատարել:

Մենք պահանջում ենք, որ յատուկ խառն յանձնաժողովների յանձնարարւելի սահմանների այդ ուղղումը՝ նրանց մանդատ տալով որոշել հայկական պետութեան բոլոր սահմանները, նկատի առնելով աշխարհագրական, ցեղագրական, պատմական, տնտեսական ու ազգամարտական պայմանները:

Տրապիզոնի վիլայէթում, որ եղել է նախկին Պոնտոսեան թագաւորութեան մայրաքաղաքը, յոյների թիւն աւելի է հայերից. բայց Տրապիզոնի նաւահանգիստը ամբողջ Բարձր-Հայքի միակ կարևոր ելքն է դէպ Սև ծովը: Յունաստանն աչք չունի այդ վիլայէթի վրայ, որ շատ հեռու է այն գլխաւոր կենտրոններից, որոնց նա պահանջում է ժողովուրդների իրաւունքների հիման վրայ. և կատարեալ համաձայնութեամբ հելլէն կառավարութեան հետ,—որ այդ հարցում երևան հանեց հաւասարակշռութեան մի լայն հոգի, որը չենք կարող չգնահատել—

պահանջում ենք հայկական պետութեան կցել Տրապիզոնի նահանգի մի մասը: Նրա յոյն ազգաբնակչութիւնը կարող է վստահ լինել, որ հայկական վարչութիւնը նրան կապահովէ իր կրօնի և լեզուի հանդէպ յարգանքը՝ եղբայրութեան և համահաւասար արդարութեան ռեժիմի տակ:

Միւս կողմից պէտք է յայտարարենք, որ Յունաստանին տրւելիք շրջանների հայերն էլ իրենց կողմից վստահութեան և ուղղամտութեան նոյն ոգով են ընդունելու հելլէն կառավարութեան տակ իրենց ստանալիք զբոսթիւնը:

Ինչ վերաբերում է Կիլիկիային կամ Փոքր Հայքին, կարիք կայ տեսնու, որ նա էապէս հայկական է և միշտ էլ կազմել է Հայաստանի մասը: Նա մօտ չորս դար եղել է հայկական վերջին թագաւորութեան բնակավայրը՝ մինչև այն օրը, երբ յաղթելով արաբներից՝ նրա վերջին թագաւոր Լեւոն V դերի տարւեց Եգիպտոս, և ապա ազատւելով՝ իր վերջին օրերն ապրեց Պարիզում: Նա թաղւել է Սեն-Դընիի մայր-տաճարում, ուր նրա շիրիմը կայ մինչև այսօր էլ:

Ձէյթունի շրջանը, որի լեռնականները, կուռղ ու ազատասէր ցեղից, շարունակ բուռն կերպով յարած են եղել իրենց ազգային իրաւունքներին, միշտ էլ վայելել է կէս-անկախութիւն: Աւելորդ չէ յիշել նաև, որ հնուց ի վեր, ինչպէս այսօր էլ, Սիսի կաթողիկոսի, Կիլիկիայի կրօնական գերագոյն պետի, օթոռանիստ քաղաքն է եղել Սիսը, Կիլիկիայի մայրաքաղաքը: Կիլիկիան ունի հայ և թիւրք ազգաբնակչութիւն: Արաբ տարրը քիչ է:

Պատերազմից առաջ Կիլիկիայում եղել են միայն 20,000 սիւրիացիներ, մինչ հայերի թիւը 200,000-ից աւելի էր, չնայած 1909 թ. Աղանայի կոտորածի հետեանքով առաջացած անագին գաղթականութեան: Մտորև, պատմական մասում, կարելի է գտնել այլ ապացոյցներ, որոնք հաստատում են Կիլիկիայի վրայ մեր անվիճելի իրաւունքը: Հեռաւարտ, անհասկանալի է մնում, թէ Միւրիական կոմիտէն ինչ սկզբունքի հիման վրայ է պահանջում Կիլիկիան, իբր Միւրիայի մի մասը, և իր սահմանը առաժուցում մինչև Տաւրոս, ինչպէս այդ երևում է այդ կոմիտէի հրատարակած և Մարսէյի սիւրիական կոնգրեսին Ձերկայացրած քարտէզից: Ո՛չ մի քարտէզ, ժամանակակից թէ՛ հին աշխարհի, Կիլիկիան չի պարփակում Միւրիայի մէջ, որի հիւսիսային սահմանն է ոչ թէ Տաւրոսը, այլ Ամանոսը, և անցնում է Ալէքսանդրեաթի մօտից:

Հայ ժողովուրդը, զրկւելով Կիլիկիայից, անջատւելով իր բնական նաւահանգիստներն եղող Մերսինից և Եւմօրթալըկից (Սյաս)՝ կը դատապարտւէր թառամելու իր լեռներում, առանց յարաբերութեան Միջերկրական աշխարհի հետ և առանց շնչելու, ինչպէս ատում է, շատ ճիշտ մի արտայայտութիւն, Հայաստանը զրկւած կը լինէր իր թոքերից: Նրա կենսաբն ու ապագան Միջերկրական ծովի վերայ են:

Բացի այդ, Միւրիական կոմիտէի թէզը չի կարող հաշտեցնել Փրանսիական կառավարութեան և հայկական պատերազմութեան միջև կայացւած համաձայնութեան հետ 1916 թ.ա.կա-

նին, երբ հայկական պատերազմութեան տեղեկացեց՝ դաշնակից պետութիւնների միջև ասիական թիւրքիայի մասին կայացած համաձայնագրի մէջ Հայաստանին վերաբերող յօդածը: Պատերազմութիւնն այդ ժամանակ երախտագիտութեամբ համաձայնելով դաշնակիցների ցանկութեանը, որոնք նրան խոստանում էին Կիլիկիայի և արևմտեան երեք նահանգների թիւրքական լծից ազատագրումը, փութաց հայ կամաւորներ տալ՝ նպաստելու համար նրանց հայրենիքի պատումին: Այդ կամաւորներից աւելի քան 5000 ը մտան Արևելքի լեզդիսի մէջ, ուր սիւրբիացիները միայն 3 կամ 4 հարիւր էին թւով, և իրենց մասնակցութիւնն ունեցան Պաղեստինի վճռական յաղթանակին, որին կը պարտի այսօր Սիւրբան իր ազատագրութեանը:

Մենք այս փաստերը յիշեցինք միայն նրա համար, որ հաշտութեան կոնֆերանսը հնարաւորութիւն ունենայ իր վճիռները կայացնել իրազեկ լինելով գործին և համաձայն ազգութիւնների սկզբունքի, որը նա հիմք է ընդունել իր խորհրդածութիւնների համար:

Եւ սակայն, եթէ հայերի և սիւրբացիների միջև սահմանադրի մասին տարակարծութիւն կայ, պիտի ասենք, որ սիւրբացիների նկատմամբ մեր բարեկամութեան ու համերաշխութեան զգացումները, որոնք ամրապնդւած են երկու ժողովուրդների դարաւոր ընդհանուր տառապանքներով, զբանով չեն թուլանալ և ոչ ոք մեզնից աւելի չի ցանկանում, որ կազմել ազատ ու հզօր Սիւրբա, իբր հարևանը հայկական պետութեան:

Մենք պահանջում ենք, որ այդ կերպով սահմանադրւած Հայաստանը դրեի դաշնակից և գործակից պետութիւնների կամ ազգերի դաշնակցութեան հաւաքական երաշխաւորութեան տակ, որոնք երաշխաւորելու են նրա ամբողջականութիւնն ու նրա տերրիտորիայի անձեռնմխելիութիւնը: Բացի այդ, նրանք կը յանձնարարեն պետութիւններից մէկին, որ առաջին տարիների ընթացքում իր օժանդակութիւնը ցոյց տայ նոր պետութեանը՝ երկրի կազմակերպման և տնտեսական ու ֆինանսական վերականգնման համար: Այդ օժանդակութիւնն ոչ մի կերպ չպէտք է ստանայ պրոտեկտորատի կերպարանք, մինչև անգամ ժամանակաւորապէս, այլ պէտք է կատարել յօգուտ հայ ազգի, այնպէս որ պետութեան գերիշխանութեան ոչ մի հարւած չհասցւի:

Հայոց ազգային պահանջների ծրագիրը կարող է ամփոփւել հետևեալ կերպով: Մենք պահանջում ենք.

1. Ճանաչել հայկական անկախ պետութիւնը՝ կազմւած եօթ վիլայեթների, Կիլիկիայի և Կովկասի հայկական հանրապետութեան տերրիտորիաների միացումով:

Երաշխաւորող պետութիւնների պատերազմներից բազմապատ անհամադրման յանձնաժողովներին, աջակցութեամբ հայկական կոմիտարների, յանձնարարւում է տեղումը որոշել Հայաստանի վերջնական սահմանները: Այդ յանձնաժողովները պիտի ունենան ամենալայն լիազօրութիւններ՝ գերիշխանօրէն վերացնելու բոլոր այն զգաւորութիւնները, որոնք կարող են պատահել սահմանակից երկրների հետ:

բարաէզում գծւած սահմանը հուլի վրայ անցկացնելու ժամանակ:

2. Այս կերպով կազմւած հայկական պետութիւնը դրւում է հաւաքական երաշխաւորութեան տակ դաշնակից պետութիւնների և Միացեալ-Նահանգների, կամ ազգերի դաշնակցութեան (ընկերութեան), որին նա պահանջում է անդամակցել:

3. Հաշտութեան կոնֆերանսը պետութիւններից մէկին տալիս է յատուկ մանդատ՝ Հայաստանին օժանդակելու մի անցողակի ժամանակաշրջանի համար: Այդ մանդատն ունենալիք պետութիւնն ընտրելու համար պէտք է խորհրդակցել այժմ Պարիզում գումարւած հայկական կոնֆերանսի հետ, որ ներկայացնում է ամբողջ հայ ազգը: Մանդատի տեղութիւնը պէտք է լինի առ առաւելն 20 տարի:

4. Հաշտութեան կոնֆերանսը պէտք է որոշէ մի զբամական հատուցում՝ վերականգնելու համար հայ ազգի կրած բոլոր վնասները կոտորածներից, տեղահանութիւններից, կողպուտներից ու աւերումներից:

Հայաստանն իր կողմից պատրաստ է իր վրայ վերցնելու օսմանեան հանրային պարտքի պատերազմից առաջ հաշւած գումարից իրեն ընկնող բաժինը:

Ե. Օժանդակող պետութիւնը պէտք է մանդատ ունենայ հետևեալների համար.

ա. Ստիպել թիւրք, թաթար և այլ իշխանութիւններին, որոնք դեռ ևս գրաւում են այդ տերրիտորիաները, պարզել նրանց.

բ. Ձեռնարկել ժողովուրդների ընդհանուր զինաթափութեան.

գ. Արաքսի ու պատժել կոտորածներին մասնակցողներին, ժողովուրդների վրայ բռնացողներին, թալանի մասնակցողներին կամ զոհերին կողպուտուց օգտուողներին:

դ. Երկրից դուրս հանել կարգը խանգարող տարրերին և անհնազանդ թափառական ցեղերին:

ե. Վերադարձնել (իրենց երկիրը) մուհալիբներին (մահմեդական գաղութներին), որոնք բերւած և տեղաւորւած են համիդեան ու ժէօն-թիւրք ռեժիմների օրով:

զ. Վերջապէս՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, ներսում և դրսում, իրենց նախկին կրօնին վերադարձնելու ընդի ոյժով իսլամացւած կամ հարեմներում արգելափակւած կանանց, աղջիկներին, երեխաներին և այլն:

Տաճկաստանը պէտք է յանձն առնէ վճարելու փոխարժէքն իր բեկէդիցիանների և իրաւատէր հայերին հաւասարակշիռ հատուցումով միասին վերադարձնելու՝ իր տերրիտորիայում գտնուող անշարժ կայքերը, ինչպէս և կեղեցիկները, դպրոցները, վանքերը՝ սրանց յարակից ու պատկանեալ հողերով ու ինչքերով, որոնք որևէ ձևով խլւած են հայ համայնքի ձեռքից:

Ինչ վերաբերում է Տաճկաստանում անժառանգ մնացող ազգային կամ մասնաւոր հայկական ինչքերին, Պոլսի հայ եկեղեցական իշխանութիւնները իրաւունք են ունենալու դրանց վերցնել իրենց տրամադրութեան տակ, ծախել և արդիւնքը յատկացնել իրենց հօտի կարիքներին:

Հայկական ծագում ունեցող ամեն անհատ, որ ապրում է օտար երկրում կամ դարձել է այդ երկրի բնիկը,

հինգ տարւայ ընթացքում իրաւունք պիտի ունենայ, իր և իր անչափած հաս երեխաների անունով, դառնալ հայկական քաղաքացի՝ նախապէս այդ մասին անդեկացնելով երկու երկրների պատկանեալ իշխանութիւններին:

Հայերը լիովին ապաւինում են հաշտութեան կոնֆերանսի արգարադատութեան և չեն կասկածում, որ նա չի նւիրագործիլ իրենց այդ ազգային պահանջների ծրագիրը: Գետութիւնները, որոնք այժմ ճանաչում են հայերին, որոնց ազգային զգացումը, կենսունակութիւնն ու ռազմական աւաքինութիւնները հզօր կերպով արտայայտեցին այս պատերազմի ընթացքին, կարող են վստահել նրանց: Գետութիւնները պէտք է հաշի առնեն այն էներգիան, աշխատասիրութիւնն ու ընդունակութիւնները՝ մարդկային գործունէութեան բոլոր արտայայտութիւններում, որ ունի նշանակելիօրէն բազմաժանունը, բարձրագոյն կուլտուրային և պրոգրեսիւն պատրաստած հայ ցեղը:

Նրանք կարող են վստահ լինել, որ Հայաստանը, այդպիսի տարրերով խաղաղութեան, արդարութեան, ազատութեան ու ինքնիշխանի տակ, շնորհիւ ազգերի դաշնակցութեան հովանաւորութեան ու մանդատ ունեցող պետութեան օժանդակութեան, շուտով կը դառնայ ծաղկած ու բարգաւաճ մի պետութիւն և արեւելքում կը լինի խաղաղութեան ու քաղաքակրթութեան ամենակարեւոր գործօններից մէկը:

Հայկական հարցը միայն անդակաւն ու ազգային խնդիր չէ. նա շահագրգռում է Նւրոպայի խաղաղութիւնը և նրա վճռելուց է կախած Մերձաւոր

Արեւելքի խաղաղացումը, պրոգրեսն ու բարգաւաճումը:

Պարիզ, 12 փետր. 1919

Նախագահ Հայկական Ազգ.

Պատերազմութեան

Պօղոս Նուբար՝

Նախագահ հաշտութեան կոնֆերանսին Հայկական Հանրապետութեան

Պատերազմութեան

Ա. Ահարոնեան

### Կիլիկիան

Մի քանի ժամանակից ի վեր, Սիւրիական կոմիտէները շրջաբերութեան են հանել բրոշլերներ ու քարտէզներ, որոնցով նրանք ճգնում են Կիլիկիան միացնել Սիւրիային: Արդ, Կիլիկիան իր պատմութեամբ, իր ազգաբնակչութեամբ և իր անտեսական յարաբերութիւններով Հայկական Բարձրաւանդակի բաղկացուցիչ մասն է և շատ որոշակի է բաժանւած Անատոլիայից, ինչպէս և Սիւրիայից:

Հայկական բոլոր տերրիտորիաները կազմում են մի ընդարձակ և շատ բարձր հարթավայր՝ յենւած Փոքր-Կովկասի լեռնաշղթայի, Գոնտոսի միջանկեալ (միջնորդ) հայկական շղթայի, Տաւրոսի, Անտի Տաւրոսի և նրանց երկրորդական շղթաների վրայ: Մի քանի սարեր հասնում են շատ մեծ բարձրութիւնների: Այդ երկիրը ամբողջովին ծածկւած լեռներով և կարճաւած խորունկ ձորերով՝ կարելի է համեմատել մի խճճւած հանգոյցի, որ այդ սարերը մասերի ներկայացրած անդազրական համանմանութիւններով կազմում է միասեռ մի ամբողջութիւն, աշխարհագրական խիստ բնորոշ մի

միաւոր: Դա մի հսկայական բերդ է, մի վիթխարի ծառուղի է, որ Սև-ձովի արեւելեան փակուղիից տարածւում է մինչև Միջերկրական ծովը, և որ կարեւոր դեր է խաղացել պատմութեան մէջ: Նա բաժանում է Ասատուլիի բարձրաւանդակը Կուրի դաշտահովիտներից, Պարսկաստանի անապատներից, Միջազեաքից ու Սիւրիայից:

Քիւրդիստանի լեռներն ու Ամանոսը, որոնք Հայկական Բարձրաւանդակի վերջին ծայրերն են և որոնք ճնւում են յանգում Միջերկրականին՝ Ռաս-էլ-Խանդիրի հրաւանդանով, նախկին և ժամանակակից բոլոր աշխարհագրութիւնների համաձայն, մի պատանէջ են, որ Սիւրիական տափաստանից բաժանում է ոչ միայն Կիլիկիան, այլ և ամբողջ Անատոլիան: Նոյնպէս Անտի-Տաւրոսն ու Բուլղարեան լեռները (Բողղար դաղը) արեւմուտքից սահմանակցում են հայկական բարձրաւանդակին և զալիս են վերջանում Մերսինում՝ Միջերկրականի վրայ, նրանք Կիլիկիայի չորս սանջակները զատում են Փոքր-Ասիայից: Կիլիկիան իր ջրաբաշխական սիստեմով էլ բոլորովին զատւում-որոշւում է իր երկու հարևաններից և կցւում է Հայկական Բարձրաւանդակին, որովհետև իր երեք գլխաւոր գետերը, Տարսոսը, Միհունն ու Զիհունը բոլորում են հայկական լեռներից և թափւում են Ալէքսանդրեաի ձոցը: Այս ձոցն ինքն էլ, սեղմւած Հայկական Բարձրաւանդակի լեռների երկու թևով՝ նրա բնական ելքն է դէպի ծովը:

Կիլիկիայի պատմութիւնը նոյնն է, ինչ ամբողջ Հայկական Բարձրաւանդակի, Բարձրաւանդակների ստորո-

տում գտնւելով, նա հանդիսանում է այն անխուսափելի ճանապարհը, որը ուղել են ձեռք ձգել ասիական բոլոր տիրապետողները: Հիատիաների օրով է, որ Կիլիկիան առաջին անգամ անկախ դարձաւ: Դարեր շարունակ նա հանդիսացել է մի ուժեղ թագաւորութիւն, որի դէմ Եգիպտոսի Ռամսէսներն ու Տուրքիաները ի զուր կուեցին՝ մինչև այն օրը, երբ նա վերջնականապէս ընկճւեց Նինուէի թագաւորների օրով:

11-րդ դարու կէսերին է, որ այդ երկիրը միայն ի անգամ վերստացաւ իր անկախութիւնը՝ շնորհիւ հայ ժողովուրդի և իշխանների, որոնց հոսանքը, սելջուկների ճնշման տակ, ուղղւում էր դէպի արեւմուտք: Այդ հայկական թագաւորութիւնը տեկց մինչև 14-րդ դարու վերջը՝ իր սահմանները ծաւալելով կամ յետ քաշելի բեկանդական կայսրութեան մահմեդական սուլթանութիւնների դէմ մղած իր անվերջ կռիւների ընթացքում: Այդ կռիւների ժամանակ նա համարեա միշտ էլ յենւեց խաչակիրների և նրանց ձեռքով Անտիոքում, Ուրֆայում, Կիպրոսում և այլուր հիմնւած լատին թագաւորութիւնների վրայ, միշտ յարած արեւմուտքի ժողովուրդներին իր կրօնով ու վաճառականութեամբ, պալատական սովորոյթներով ու մանաւանդ իր թագաւորական տան ընտանեկան կառկերով: Վերջ ի վերջոյ նա ապալուեց թիւրք-մահմեդական ներխուժումների հեղեղի տակ:

Մենք կանգ չենք առնելու այն փաստի վրայ, որ «Սիւրիա» տերմինն երբէք չի եղել քաղաքական մի արտա-

յայտութիւն և Սիւրիացիների թագաւորութիւն գոյութիւն չի ունեցել: Սելևկոսի, Ալէքսանդրի զօրավարներից մէկի, հիմնած Սելևկեան թագաւորութիւնը յունական էր և սիւրիական ազգային բնոյթ չունէր:

Այսօր մի նոր կերպարանափոխութիւն է սկսուում Կիլիկիայի պատմութեան մէջ՝ այն առաւելութեամբ, որ այնտեղ հնաւուրց աւերակների վրայ նոր հայրենիք հիմնելու վրայ եղող ժողովուրդը նորելուկ չէ, այլ նոյն ժողովուրդը, որ ամբողջ դարեր ապրել է այնտեղ, կուսել, տառապել և որ պահանջում է իր նախնիքների հողը ժառանգելու իր իրաւունքը: Նրա այդ պահանջն այսօրանից չի սկսուում, այլ այն օրանից, երբ նա պարտւեց ու լուծի տակ մտաւ:

Չմոռանանք, որ Կիլիկիան, ինչպէս առհասարակ Հայկական Բարձրաւանդակը, իր ամբողջութեանը մէջ երբէք չէ ենթարկւած թիւրքական տիրապետութեան: Մինչև 19-րդ դարու կէսը հայերի փոքրիկ խմբակներ մնացել են իրենց լեռների իրական տէրը՝ օսմանեան տիրապետութեան դէմ յարատև կուով:

Այսպէս, Ձէյթունի շրջանի պատմութիւնը վերջին 50 տարիների ընթացքին եղել է կեղեքողի լուծի դէմ ապստամբութիւնների մի շարան: Ձէյթունցիները 1860-ին կուսեցին Նուրշիդ փաշայի 12,000 զօրքի դէմ. 1862-ին Ազիզ փաշայի 35 հազարանոց կանոնաւոր և անկանոն զօրքերի դէմ. 1896-ին էդհէմ փաշայի 40,000-նոց բանակի դէմ: Նւ, չնայած այդ ամենին, մինչև մեծ պատերազմի ըսկիզբը, Ձէյթունն երբէք ամբողջովին

չի ընկճւած. նա միշտ մարմնացրել է Հայաստանի կենդանի բողոքը թիւրքական լուծի դէմ՝ ճիշտ այնպէս, ինչպէս արել են Մասունցիները՝ Տաւրոսի նոյն լեռների մի այլ մասում:

Չմոռանանք, որ Կիլիկիայում էլ, ինչպէս ամբողջ Հայաստանում, տաճիկ կառավարութեան սխտեմատիկ կերպով կազմակերպած կոտորածների միակ նպատակն է եղել արեան մէջ խեղդել հայերի այդ բողոքը և բնաջնջել ամբողջ հայ ազգը, որ գերտակցելով իր իրաւունքն ու արժանիքը, յամառօրէն տեսչում էր անկախութեան:

Կիլիկիայում կայ մեր դարաւոր իրաւունքների մի այլ պահապանն ևս — Կիլիկիայի կաթողիկոսը, որ դարեւոր արիւնալի վերիվայրութիւնների ժամանակ, ինչպէս այսօր էլ, նստել է Սիւս արքայական աւերակ պալատում և սպասում է Հայկական Կառավարութեան գալուստ, որպէսզի նրան յանձնէ այդ աւերակները՝ մարտիրոսացած ժողովրդի վերապրողների հետ միասին, որի թիւը ժամանակին հասնում էր կէս միլիոնի:

Կիլիկեան չորս սանջակներում ազգաբնակչութեան զանազան տարրերի յարաբերական թիւը պատերազմից առաջ եղել է նոյնն, ինչ որ Հայկական Բարձրաւանդակում: Երկրի զըլխաւոր ազգաբնակչութիւնը բաղկացած է երեք տարրերից — հայերից, որոնց թիւը 200,000-ից աւելի էր, թիւրքերից՝ թուով 78,000, և թիւրքմէններից ու թափառաշրջիկ քիւրդերից՝ թուով մօտ 60,000: Միւս ցեղերն երկրորդական տեղ են բռնում, ամբողջ Կիլիկիայի կէս միլիոն ազգա-

բնակչութեան մէջ կան 15,000 արաբներ և մօտ 20,000 քրիստոնեայ սիւրիացիներ:

Հայաստանի այս անգաբնակչութիւնը (հայեր, թիւրքեր, քիւրդեր) կատարելագէս տարբեր է Փոքր-Ասիայի բնակչութիւնից, որի գլխաւոր տարրերն են թիւրքերն ու յոյները, և հիւսիսային Սիւրիայի ազգաբնակչութիւնից, ուր գերակշռող տարրերն են արաբը, թուրքն ու քիւրդը: Քիւրդական լեռներից և Ամանոսից հիւսիս արաբները և քրիստոնեայ սիւրիացիները միասին կազմում են ազգաբնակչութեան հազիւ 7 տոկոսը՝ թէ՛ չորս սանջակների և թէ՛ անմիջապէս սահմանակից գաւառակների մէջ. մինչ այդ լեռներից 1 կամ 2 կիլոմետր հարաւ՝ արաբ տարրը կազմում է ազգաբնակչութեան կէսից աւելին: Դա նշանակում է, որ Ամանոսն ու քիւրդական լեռները կազմում են մի բնական պատուար, որ զալիս և շատ որոշակի վերջանում է Սիւրիայի սահմանը և սկսում է Հայաստանը:

Անկախ այդ պատմական, աշխարհագրական և վիճակագրական կապերից, կան և այլ պայմաններ, որոնք բղխում են դրանցից, և ամբողջս միացնում Կիլիկիան չորս սանջակները Հայաստանի միւս մասերին: Նախ՝ զգացումի նկատառումները — լինելով մեր վարչին թագաւորների բնակատեղին, մեր վանքերի ու մեր բերդերի աւերակներով ծածկւած հողը, մեր անկախութեան ու մեր զիմադրութեան յուշարձանը, Կիլիկիան մինչև մեր օրերն էլ մնում է որպէս հայերի ակնածութեան ու զգաւանքի առարկան: Այժմ էր բան չի կարող խզել այդպիսի

կապերը. ժողովուրդներն երբեմն կենթարկւեն այդպիսի խզումների, բայց երբէք չեն հաշուել նրանց հետ:

Բայց այդ զգացումին աւելանում է և անտեսական հրամայական անհրաժեշտութիւնը՝ ամեն դնով միացնելու Միջերկրականի ծովեզրեայ այդ շերջանը իր հայկական ներքնաշխարհին: Ընդարձակ բարձրաւանդակն իր արդիւնաբերական ու առևտրական զարգացման համար կարիք ունի դէպի ծովը մի ելքի: Հայաստանը դատել այդ ծոցից՝ կը նշանակէ կտրել նրա անտեսական զարկերակները, կը նշանակէ խեղդել նրա արտադրիչ ոյժը:

Կայ և բարոյական գործօնը, որ ոչ նւազ կարեօր է. հայերն աշխատասէր են, գործունեայ, արտադրող. բայց նրանք թաթախւած են շրջապատի ճակատագրապաշտ թմրութեան մէջ: Նրանք արիակաւ, քրիստոնեայ մի ժողովուրդ են, բայց խեղդւած թիւրքմանմեզական ծովի մէջ: Հայն արեւմուտքի է իր հողով, բայց ապրում է թիւրքի, թաթարի, այսինքն՝ ամենայնառմայ Արևելքի հետ շարունակական շփման մէջ: Գուցէ դա է հայ ժողովրդի վրտութեան ամենից ողբերգական կողմը, Ուստի հասկանալի է, որ Հայաստանն իր հոգու ամբողջ ոյժով ցանկանում է սերտօրէն կապել արևմտեան աշխարհի հետ և անմիջական ու արագ շփում ունենալ Արևմուտքի հետ: Դրանից է նրա անյազթելի ձգտումը դէպի Միջերկրականի լազուրո, որը միայն կարող է ազատել նրան ասիական բանտարգելութիւնից: Նրա առաջ այդ ելքը փակելը կը նշանակէ նրան հրել դէպի



Թիւրք-մահմեդական աշխարհը, որի բարքերին նա այլևս չի ուզում հպատակել և որոնց դէմ նա ստիպւած կըլինի կուել՝ մինչև որ Միջերկրահանի վրայ այդ դուռը բացել իրեն համար:

Ասեմք նաև, որ հայերը Կիլիկիայում չեն պահանջում ամբողջ Ազանայի վիլայէթը: Մերսինից արևմուտք Իլիլի շրջանը, ուր հայ տարրը սակաւթիւ է, կարող է կարել նրանից:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի բնակչութիւնը

Մինչև 19-րդ դարու կէսը՝ հայ ազգաբնակչութիւնը Տաճկահայաստանում կազմում էր բացարձակ մեծամասնութիւն: Վերջին 50 տարիների ընթացքում, համրեան և երիտասարդ-թիւրք բնօրինների օրով, հարիւրաւոր հայ գիւղեր, որոնց նկարագրութիւնը կայ մեր 40—50 տարի առաջւայ գրականութեան մէջ, անհետացել են: Թիւրք կառավարութիւնը նրանց տեղը հաստատել է թիւրքերի, քիւրդերի և Բալխաններից ու Կովկասից գաղթած թիւրքերի, չէրքէզների: Միւս կողմից՝ կեանքի անսպասելիութիւնը, թշուառութիւնը, արգարութեան բացարձակ չգոյութիւնը, բռնապետութիւնն ու հալածանքը ստիպել է բազմաթիւ հայերին գաղթել Ռուսաստան, ազատագրւած Բալխանեան երկրներն ու Ամերիկա:

Բայց, չնայած թիւրքերի բոլոր ճիգերին ու մեքենայութիւններին, հայ ժողովրդի զիւաւոր մասը մնացել է իր հայրենի հողին կապւած՝ մի յամառ ապականութեամբ. նա կազմել է միշտ,

ինչպէս և մինչև պատերազմի սկիզբը, Հայաստանի բնակչութեան ամենակարևոր տարրը՝ ոչ միայն իր իմացական գերակայութեամբ և իր տրնտեսական գործունէութեամբ, այլ և իր թւի համեմատական առաւելութեամբ՝ ազգաբնակչութեան միւս բոլոր տարրերի վրայ:

Ի՞նչ էր Հայաստանի ազգաբնակչութեան թիւը կոտորածներից առաջ և ի՞նչ էր զանազան տարրերի միջև համեմատութիւնը: Այդպիսի հարցում երբէք չպէտք է դիմել թիւրքական տւեալներին. Նախ՝ Տաճկաստանում երբէք չի եղել կանոնաւոր ցուցակագրութիւն, ոչ էլ ստոյգ վիճակագրութիւններ—թիւրք կառավարութիւնը միշտ դիտումնաւոր կերպով կեղծել է վիճակագրութիւնները՝ հաստատելու համար, որ հայերը միայն աննշան փոքրամասնութիւն են կազմում:

Յիշենք այդ կեղծիքներից մի քանիսը.

Թիւրք կառավարութիւնը Վանի վիլայէթի հայերի թիւը ցոյց է տալիս 80,000. արդ, ճշգրտապէս պարզւած է, որ այդ վիլայէթի հայերի թիւը, որոնք վերջին դէպքերի առթիւ ապաստանել են Ռուսաստան, 220,000-ից ակելի է:

Հայաստանի միւս ծայրում, ամբողջ Մարաշի սանջակում թիւրք կառավարութիւնը հաշուում է 4,200 հայ. մինչ միայն Մարաշ քաղաքում, էլիզէ Ռեքլիսի տեղով, կային ակելի քան 20,000 հայեր, այն է՝ քաղաքի ազգաբնակչութեան կէսը: Զէյթունը, որ գտնուում է այդ նոյն Մարաշի սանջակում, 1880 թւականին տեղում կատարւած վիճակագրութեան համար

ձայն ունեցել է 27,460 հայեր և 8,344 մահմեդականներ:

Թիւրք կառավարութիւնը Վանի, Բիթլիսի, Դիարբէքի, Սարբերգի, Էրզրումի, Տրապիզոնի, Սըւադի, Ադանայի և Հալէպի 9 վիլայէթների հայերի ըսդհանուր թիւը ներկայացնում է 848,000: Մինչ, Հայաստանին և Սիւրիային Նպաստամատոյց կոմիտէն 1916 թ. հրատարակւած իր հինգերորդ բիւլետենում վկայում է, որ Հայաստանում կոտորւած հայերի թիւն է 600,000—850,000 ի մէջտեղ և Զօր, Հալէպ ու Դամասկոս տեղահանւածների թիւն է 486 000, Անատոլիայի ներսերը քաջաների թիւը 300 000 կովկաս ապաստանածների թիւը 200,000. Եթէ այդ թւերի վրայ տւեալ ցանցնք կովկասում գաղթականներից խուրբայի խլած բազմաթիւ զոհերը, խլամացւածներին, տանը մնացած կանանց ու երեխաներին, կը տեսնենք, որ թիւրքերի ցոյց տւած թիւն իրականի կէսից էլ պակաս է:

Թիւրք կառավարութեան կատարած վիճակագրութիւնների սովորական սխառն է հեռեկալը. նախ, առանց շատ փոխելու ամբողջ ազգաբնակչութեան թիւը՝ ըստ կարելոյն նազեցնել քրիստոնեաների թիւը և տարբրութիւնն ակելացնել մահմեդականների թւի վրայ. 2. զգուշանալ տալ ազգութիւնների ճշգրիտ թիւը, այլ նրանց խմբաւորել ըստ կրօնի. այսպէս՝ նրանք զատ զատ են հաշուում ուղղադաւան, բողոքական ու կաթոլիկ հայերին, մինչ մէկ թիւ կազմած են ցոյց տալիս մահմեդականներին: Այդպիսի յետոյ, որ պէտք է երաշխաթիւրքերին, Թաթարներին, թիւրքմէներին, քիւրդական զանազան ցեղախմբութիւնը, Հայաստանի ազգաբա-

րին, չէրքէզներին, զազաներին, տւրաններին, պարսիկներին, Թափառաշրջիկ բոհեմիացիներին (գնչու) և զեզատներին, թէև նրանք շատ տարբեր են իրարից՝ ցեղով, պատմութեամբ, տնտեսական կեանքով, կուլտուրական մակարդակով և վերջապէս՝ քաղաքական հակումներով:

Ահա այդպիսի հիմքերի վրայ են կազմւած ցեղագրական բոլոր քարտէզները, որոնք յաճախ են մոլորեցրել եւրոպական հանրային կարծիքը:

Օսմանեան կայսրութեան մէջ ազգագրական հարցերը չեն կարող քննւել և ուսումնասիրւել այն մեթոդներով, որոնք գործածուում են եւրոպական երկրներում: Ասիական Տաճկաստանում ազգային քաղաքական միաւորներ ստեղծելու համար ազգութիւնների սկզբունքը գործադրել ուզելով բացարձակապէս անտրամաբանական կը լինէր հիմք ընդունել զանազան շրջանների ազգագրական պատկերը: Թիւրքիայում կան միայն քաղաքական հարցեր. և տւեալ ըստ էին այդ կայսրութեան որևէ մասի ազգագրական պատկերն ուրիշ բան չէ, եթէ ոչ համապատասխան քաղաքական գրութեան հետեանքը: Արդ, չի կարելի հիմնել հետեանքի վրայ, երբ ուզուում է վերացնել պատճառը Նախքան Բերլինի դաշնագրի կնքւելը՝ Հայաստանը, թէև հինգ դար ճնշւած, ներկայացնում էր հայկական հոծ ազգաբնակչութիւն, որ կազմում էր բացարձակ մեծամասնութիւն: Բերլինի դաշնագրի հայերի կեանքի և ինչքի ազաներին, քիւրդական զանազան ցեղախմբութիւնը, Հայաստանի ազգագրա-

կան պատկերն արմատապէս փոխեց բունութեամբ ու կոտորածով: Բաղդատելով հայոց պատրիարքարանի 1882 և 1912 թւականներին կազմած վիճակագրութիւնները, գտնում ենք, որ 1882 ին Տաճկաստանում հայերի թիւն է եղել 2.600.000, որից 1.680.000 ը վեց վիլայէթներում, մինչ 1912 ին այդ թւերը ընկնում են 1.100.000-ի և 1.018.000-ի: Ուստի պարզում է, որ տաճկահայերի ընդհանուր թիւը պակասում է 500.000-ով: Իրականութեան մէջ, այդ նւազումը հայկական վեց վիլայէթներում եղել է 612.000. զա նշանակում է, որ Հայաստանից դուրս տաճկահայերի թիւն աւելացել է 112.000 ու: Սա մի ջանքատէր փաստ է, որ Տաճկաստանում ազգազրական հարցն ուրիշ բան չէ, եթէ ոչ քաղաքական հարցի սրութեան աստիճանի հետեանքը—այն փաստը, որ 30 տարւայ մէջ (1882—1912) վեց վիլայէթների հայերի թիւը, փոխանակ աւելանալու, պակասել է 662,000 ու, մինչ Թիւրքիայի այլ մասերում հայերի թիւն աւելացել է 162,000 ու, բացառում է միայն նրանով, որ Տաճկաստանի այլ մասերում ճնշումը նրազ վայրագ է եղել, քան վեց վիլայէթներում: Անդադառնալով հայերի ամբողջական թւի նւազումին, կարելի է հաւատար, որ այդ նւազումը եզրած լինի 500,000: Անտարակոյս՝ ոչ հայերի նման բազմաճնունդ մի ցեղ այդ 30 տարւայ ժամանակամիջոցում պէտք է աւելանար առնւազն 500,000 նոր ծնունդով: Դրանից հետեում է, որ այդ 30 տարւայ միջոցին թիւրքերի կողմից կոտորած հայերի թիւն իրականութեան մէջ եղել է մի մի-

լիոն՝ հաշւելով, որ բունութեան հետեւանքով գաղթականութեան թիւը կը հասնի 100,000 ի:

Այս պատերազմի ընթացքում կորան աւելի քան մի միլիոն հայեր: Ուրեմն, Բերլինի դաշնագրից ի վեր, որով պետութիւնները հանդիսաւորապէս յանձն առան երաշխաւորել հայերի ապահովութիւնը, աւելի քան երկու միլիոն հայեր են սպանւած թիւրքերի կողմից: Նոյն պետութիւններն այժմ չեն կարող ժխտել Հայաստանի զուտ հայկական բնոյթ ու նենալը՝ յենւելով այնպիսի մի ազգագրութեան վրայ, որի հիմքն է բունութիւնը:

Բայց թիւրքիայում ազգազրական հարցը միայն վերջին քառասուն տարիների ընթացքում չէ, որ եղել է կամայական: Այդ դրութիւնը տեղում է տաճկական կայսրութեան հիմնադրութիւնից ի վեր: Թիւրքիայի ազգազրական պատկերը, նւաճումից ի վեր, արագացել է նրա դարաւոր քաղաքականութիւնը, որ կայացել է հպատակ ցեղերը ջնջելու մէջ: Երբ թիւրքերը նւաճեցին իրենց կայսրութիւնը, իսկական Փոքր-Ասիան պարունակում էր միայն յունական հոծ ազգաբնակչութիւն: այսօր նա պարունակում է թիւրքական հոծ ազգաբնակչութիւն՝ ծովեզերքում յունական խառնուրդներով: Ի՞նչ է այդ կերպարանափոխութեան պատճառը: Գատնութիւնն ապացուցում է, որ երբ բարբարոս ցեղերը դրաւն մի քաղաքակիրթ երկիր, նրանք կը ձուլեն քաղաքակրթութեամբ բարձր հպատակ ազգաբնակչութեան մէջ, ինչպէս ձուլեցին Փրանկները Գաղղիայում, լոմբարդ-

ներն Իտալիայում, բուլղարները Բուլղարիայում: Միայն Տաճկաստանն է կազմում այդ պատմական օրէնքի բացառութիւնը, և դա առաջացել է թիւրքերի այն քաղաքականութիւնից, որ կոտորածներից յետոյ զոհերի կաւածներում բերել ու հաստատել են թիւրք ժողովուրդը: Արդարև, Տաճկաստանը միշտ իբր երկրորդ բանակ է գործածել գաղութներ հաստատելու այդ սխտեմը, որ գրեթե անուշադան նւաճումներն եկել է ամբարտաւ: ազգազրական նւաճումներու: Բայց այդ, նա դրանց վրայ աւելացրել է և ուրիշ գործակիցներ, ինչպէս ենիչէրիերի բանակի, ջիւրղական համիդիէների ստեղծումը, և այլն:

Այս նկատառումները ցոյց են տալիս, որ Տաճկաստանում ազգութիւնների սկզբունքը չի կարող հիմնւել ազգազրական պատկերի վրայ, որ նոյն այդ սկզբունքի ազդակող բունաբարում է: Սակայն պատերազմն է ստանձնել այդ ինչդրին իր իսկական ըմբռնումները տալու զործը: Թիւրքական կայսրութեան այսօրւայ ազգազրական պատկերը արմատապէս տարբեր է չորս տարի առաջւայ պատկերից. ժողովուրդները դարձել են թափառաշրջիկների զանգւած: Ազգազրական մը տեւալների վրայ պէտք է իրագործել ազգութիւնների սկզբունքը:

Ակնբեր է, որ միայն մի լուրջ հիմք կայ, որը կարող է նկատի առնել—պատմական իրաւունքը՝ իր բոլոր տարրերով: Ծիշտ այնպէս, ինչպէս բալկանեան ժողովուրդները կարողացան վերստանալ իրենց անկախութիւնը, թէև իրենց ազատագրման նախօրեակին զանուում էին ազգազրա-

կան տեսակէտով նոյն դժւարութիւնների մէջ, ինչ որ ունի հայ ժողովուրդը,—Հայաստանն էլ պէտք է կարողանայ ձեռք բերել իր անկախութիւնը՝ իրագործելով «Հայաստանը հայերին» սկզբունքը, որ նւիրագործւած է 6 դարու մարտիրոսագրութեամբ: Հայաստանի ազգազրական կացութիւնն աւելի դիւրաբեկ չէ, քան Բուլղարիայի դրութիւնը 1876 թւականին: Դա որոշ երևում է այս բողջիւրի վերջում զետեղւած երկու վիճակագրութիւններից, որոնցից մէկը, կազմւած 1876-ին Ռուսչուքի հիւպատոս Մ. Օբարէի կողմից և հրատարակւած «Bulletin de la Société géographique» հանդէսի 1876 թ. օգոստոսի համարում, վերաբերում է Բուլղարիային, իսկ միւսը վերաբերում է Հայաստանին՝ կազմւած 1912 թ. հայոց պատրիարքարանի կողմից:

Կարիք կայ յիշելու նաև, որ Յունաստանն իր անկախութիւնը յարտարարած միջոցին ունէր միայն 3—4 հարիւր հազար յոյներ:

\* \* \*

Բայց, այս հիմնական փաստարկութիւններից դուրս, թիւրքերի կողմից Հայաստանում ստեղծւած ազգազրական կամայական դրութեան ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, որ այսօր էլ, չնայած դարաւոր կոտորածներին, Հայաստանում էական տարրն հանդիսանում է հայ ժողովուրդը:

Եթէ քննենք Պոլսի հայոց պատրիարքարանի կազմած վիճակագրութիւնները, ինչպէս և հայկական այլ փաստաթղթերը, կը տեսնենք, որ ամբողջ Տաճկաստանում հայ ազգաբնակչութեան թիւը պատերազմի նախօ-

բեռնին եղել է 2 միլիոնից մի քիչ ավելի, որից 1,403,000-ը բնակչությանը հասնում էին Հայաստանում (տես № 2 վիճակագրական տախտակը):

Գատերազմի ակզրին ուսուցանող զառուցանական վիճակագրությունների համաձայն, ամբողջ հարաւային Կովկասում ապրող հայերի թիւն եղել է 1.804,600, որից 1.296,000-ը իսկական Հայաստանում (տես № 3 ցուցակը):

Եթէ դրա վրայ ավելացնենք այլ երկրներում հաստատու հայերի թիւը, այն է՝ 823,000, կը ստանանք, որ զատերազմից առաջ հայերի ընդհանուր թիւն եղել է 4.470,000 (տես № 4 ցուցակը):

Այս թիւից մօտ 2,700,000-ը ազրեյիս են եղել մայր հայրենիքում և ավելի քան մէկ միլիոնը անմիջական շրջակայքում:

Հայաստանում բնակող թուրքերի թիւն եղել է 1,005,000:

Թաթարների թիւը՝ 537,000:

Թափառաշրջիկ քիւրդերի և թիւրքմէնների թիւը՝ 555,000:

Բոլոր մահմեդականները միասին կազմում էին 2,308,000:

Արդ՝

1. Առանձին վերցրած, հայերը Հայաստանում ազգաբնակչութեան ամբողջութեան բաղադրամասը կազմել են յարաբերական մեծամասնութիւն:

2. Տաճկա-Հայաստանում, առանձին վերցրած, հայերն եղել են մի քիչ պակաս, քան բոլոր մահմեդականները միասին առած:

3. Հայերը զգալիօրէն ավելի են եղած ամբողջ մահմեդական բնակչութեան թիւից՝ Տաճկաստանի և Կովկասի հայկական տարրիտորիաները միասին վերցրած:

4. Բոլոր քրիստոնեաների թիւը կազմել է 55 տոկոս, իսկ զանազան դաւանութիւնների թիւը 5 տոկոս:

Այս պատերազմի հայերից խլած զոհերի թիւը ստակալի է. այլ ժողովուրդների կորուստները սակաւաթիւ դէպքերում են անցնում 10 տոկոսից. մեր զոհերը մի քառորդն են ամբողջ հայութեան թիւի և համարեա կէսը Հայաստանում բնակող հայերի:

«Այլևս չկայ հայկական հարց, Մենք արդէն վճռեցինք այդ հարցը», ասում էր թիւրք նախարարը ցինիկ կերպով: «Անկախ Հայաստան: Այո. լաւ կը լինէր, բայց դժբախտաբար այլևս հայեր չկան», կրկնում են մեր հակառակորդները կեղծաւորութեամբ:

Ընդունել այդ փաստարկութիւնը— կը նշանակէր բացասել մարդկային ամեն արդարութիւն, անպատել այն միլիոնաւոր մարդ-արարածներին, որոնք զոհաբերեցին իրաւունքի յաղթանակի համար. դա կ'ընդունէր նւիրազործել մարդասպանների ոճիրներն ու վարձատրել մի ամբողջ ազգ բնաջնջելու թիւրքական գարշիլի ծրագիրը:

Բայց ճիշտ չէ բարեբախտաբար, որ հայերը բնաջնջել են: Չնայած, որ զոհերի թիւը հասնում է մի միլիոնի, չնայած որ վերապրողների մի մասը, փախած կամ տարագրւած, կորել է սովամահութիւնից ու համաճարակներից և մնացածներն ուժասպառել են անվերջ կռիւներից ու տառապանքներից, ազգի մի մասը վերապրել է և ունի միայն մի յոյս, միակ կամք— վառել մարած օջախը, վերաշինել ավերած տունը:

№ 3 ՌՈՒՍԱ-ՅԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ 1914 թ.

	Երեւան	Գանձակ	Ղարս	Թիֆլիս	Ընդամենը
	Ամբողջ նահանգը	Արեւմտ. կէտը	Բացի Արդահանից Կրեմլից	Սիւնիկի հարաւային անկի նը	
Հայեր . . .	669.000	376.000	98.000	153.000	1.296.000
Ռուսներ, վրացիներ և այլն .	16.000	9.000	28.000	12.000	65.000
Թուրքեր . . .	8.000	3.000	50.000	—	61.000
Թաթարներ . .	365.000	138.000	12.000	22.000	537.000
Քիւրդեր . . .	34.000	—	41.000	—	75.000
Եզդիներ . . .	17.000	—	21.000	—	38.000
	1.109.000	526.000	250.000	187.000	2.072.000

Հարաւային Կովկասի հայ ազգաբնակչութիւնը

Երեւանի նահանգում . . . . .	669.871
Գանձակի » . . . . .	418.859
Ղարսի շրջանում . . . . .	118.217
Թիֆլիսի նահանգում . . . . .	411.747
Բագի » . . . . .	120.057
Սուխումի շրջանում . . . . .	20.743
Սև-ծովեան նահանգում . . . . .	18.061
Բաթումի շրջանում . . . . .	15.182
Դաղստանի » . . . . .	4.752
Գուրիայի նահանգում . . . . .	4.643
Չաքաթալայի շրջանում . . . . .	2.530
Գումար	1.804.662 հայեր

վերսկսել աշխատանքը՝ այս անգամ այսօր ներկայացնում ենք մենք, մէկ իրեն համար, իր ազատ ու անկախ հայրենիքում: Այն երեք ու կէս միլիոնից, որ

կէս միլիոնի Կովկասում, Ռուսաստանում, Պոլսում, Եւրոպայում, Եզրպատում, Ամերիկայում, Բարկաններում և ամեն տեղ անհամբեր սպասում են մայր-հայրենիք վերադառնալու ժամին և ամենքը, յոյսի սարսուռով համակած, պատրաստում են վերագարձի:

Ինչ վերաբերում է մահմեդականներին, նրանց թիւն էլ պակասել է Հայաստանում աւելի մեծ համեմատութեամբ, քան կարծուում է առասարակ:

Նախ՝ այն վիլայէթները, որոնք գտնուում էին ռուս բանակների ներխուժման և զրաւման շրջանի մէջ, ինչպէս Էրզրումը, Տրապիզոնը, Վանը, Բիթլիսը, — այսօր մեծ մասամբ իսկական անապատներ են. մահմեդական ազգաբնակչութեան մեծ մասը զոհ է զնացել պատերազմին, փախել է կամ մահացել համաճարակներից: 1917 թ. վերջում, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթներում կային ընդամենը մօտ 46,000 թուրքեր և 50,000 քիւրդեր:

Երկրորդ, մեր տերրիտորիաների այն մասերում, որոնք կազմում էին ռազմաճակատի անմիջական թիկունքը, ինչպէս Սըւազի, Խարբերդի և Դիարբէքի վիլայէթները, մահմեդական տարրը, համաճայն գերման սպաների վկայութեան, մեծ կորուստներ է կրել պարպումի (էւակուացիա), սովի և խոլերայի ու աիֆի համաճարակների հետեանքով: Օրինակ, Դիարբէքի քաղաքը, որ պատերազմի սկզբին ունէր 55,000 բնակչութիւն, որից 1915-ի աշնանը 22,000 հայեր տեղահանուեցին և անմիջապէս փոխարինուեցին Բիթ-

լիսի շրջանից գաղթած 30,000 մահմեդականներով. 1917 թւականի մայիս ամսում ունէր ընդամենը 6,000 բնակիչ:

Նրորդ, Հայաստանում մնացած մահմեդականների մեծ մասը, հենց որ մեր անկախութիւնը նւիրագործւելի, չի ցանկանալու մնալ մեզ մօտ. նրանք կը քաշւեն դէպի սահմանամերձ տերրիտորիաները՝ մի թիւրք կառավարութեան իշխանութեան տակ ապրելու համար. այս երևոյթն է առաջացել ամեն անգամ, որ քրիստոնեայ ազգերը ազատւած են թիւրքական տիրապետութիւնից:

Եւ չորրորդ, հայ և թիւրք կառավարութիւնների միջև համաճայնութեան գալուց յետոյ՝ հնարաւոր կը լինի կատարել ազգաբնակչութեան կանոնաւոր փոխանակութիւններ: Այդ հարցը կարելի է առաջադրել նոյն իսկ Ազգերի Դաշնակցութեան և հաւասարակշիռ կերպով իրագործել այդ միջոցը, որովհետև զրանից բարիք կը ծնւի ամենքի համար էլ, Հայաստանի և թիւրքիայի, ինչպէս և համաշխարհային խաղաղութեան համար:

Կարճ ասած, Հայաստանի սահմաններում հազիւ կէսն է մնում պատերազմից առաջ այնտեղ ապրող մահմեդական բնակչութիւնից, այսինքն միլիոնից պակաս, բազիւցած հաւանօրէն կէս միլիոն թուրքերից, չէրքէզներից և նման տարրերից, 300 000 թաթարներից և 200,000 քիւրդերից:

Այնպէս որ կարելի է հետեանալ մօտաւոր ցուցատախտակը տալ՝ գաղափար կազմել տալու համար, թէ ինչ ազգաբնակչութիւն կունենայ Հայաստանն իր գոյութեան առաջին տարիներում:

Քրիստոնեաներ—3.000.000, որից հայեր 2.500.000, յոյներ, նեստորականներ, ռուսներ, վրացիներ և եւրոպացիներ 500.000: Մահմեդականներ—1.000.000, որից թուրքեր, չէրքէզներ, արաբներ և պարսիկներ 500.000, թաթարներ 300.000, քիւրդեր 200.000, այլ կրօններ—300 000, զրզրաշներ, եզիդիներ, զազաներ և ֆելլաններ 300.000:

Ընդամենը 4.300.000

Առաջինք, որ մի ժողովրդի կորուսութիւնը չափուում է ոչ միայն իր թւով, այլ և մանաւանդ իր անտեսական ընդունակութիւններով և իր կուլտուրական մակարդակով:

Ամենահին պատմութիւնները մատնանշել են արժանիքը հայերի, որոնք իրենց նախաձեռնող ոգով, իրենց յանգիւնութեամբ և մեծ ծաւալով ձեռնարկներով փորձել են, ամենահին զարբից սկսած, զարգացնել վաճառականութիւնն ու արգիւնաբերութիւնը ամբողջ առաջաւոր Ասիայում, և զրանով իսկ, փրկելից են ռոյնայի հետ, եղել են Արևելքում քաղաքակրթութեան ռահվիրաներ:

Հայերը շարունակել են այդ դերը խաղալ ամբողջ Միջագետքում, ինչպէս և նորագոյն ժամանակներում: Մենք կը տանք միայն մի գերման դիտողի, համագերմանակութեան առաջաւոր Պալ Ռորը-խի վկայութիւնը, որը կարող է կողմնապահ համարել միայն թուրքերի օգտին:

Այսօրայ Տաճկաստանում, որ սեղմւած է համարիս իր ասիական կալածներում, հայերը շատ աւելի մեծ նշանակութիւն ունեն, քան ենթադրել է տալիս նրանց թիւը միայն. ոչ մի կասկած չկայ, որ նրանք թէ իմացական և թէ նախական տեսակետով ամենագործունեայ տարրն են արևելեան բոլոր ժողովուրդների միջև: Կարելի է ասել մինչև անգամ, թէ նրանք այդ միջավայրում միակ ժո-

ղովուրդն են, որ ունի ազգային բնածին յատկութիւններ: Հայն օժտւած է այնպիսի էներգիայով ու տոկունութեամբ, որոնք հակասութիւն են կազմում այն ամենի հետ, որը սովոր ենք նկատել որպէս արևելեան նկարագիր:

Տաճկական Հայաստանում հայ տարրի անտեսական գործունէութեան մասին գաղափար տալու համար՝ ներկայացնում ենք վեց վիլայէթների միջև ամենից քիչ չափով հայկական նկարագիր ունեցող Սըւազի վիլայէթի առևտրական ու արդիւնաբերական վիճակագրութիւնը:

Եւ սակայն, կը տեսնենք, որ այդտեղ ամբողջ առևտրական ու արդիւնաբերական գործնէութիւնը գտնուում է համարեա բացառապէս հայերի ձեռքին:

Վաճառականութիւն — ներմուծում. 166 մեծաքանակ վաճառականներից 141 ը հայեր են, 13 ը թուրքեր, 12-ը յոյներ:

Արտահանութիւն. 150 վաճառականներից 127 հայեր, 23-ը թուրքեր:

37 բանկիրներից կամ կապիտալիստներից 32-ը հայերը են և միայն 5-ը թուրքեր:

9,800 խանութպաններից ու արհեստաւորներից 6,800-ը հայեր են, միայն 2,555-ը թուրքեր և 150-ը գտնազան ազգութիւնների անհատներ:

Արդիւնաբերութիւն — 153 գործարաններից 130 ը պատկանում են հայերին. բոլոր գործարանների տեխնիքական պերսոնալը բաղկացած է բացառապէս հայերից: Բանաւորների թիւն է 17,700, որոնց մօտ 14 000 ը հայ:

Կը բաւէ յիշել, որ պատերազմից առաջ երկու միլիոն հայերի ձեռքին էր մեծագոյն մասը՝ աւելի քան 20 միլիոն ազգաբնակչութիւն ունեցող օսմանեան կայսրութեան առևտրի: Բայց առևտուրն երբէք չի եղել հայ ժողովրդի զխաւոր պարագմունքը. ազգի անպիսի մեծամասնութիւնը (85—90

№ 1

**ՎԵՅ ՎԻՆՅԵԹՆԵՐԻ ԱԶԳԱՐՆԱՎՈՒԹԵԼՆ ՑՈՒՑԱԿԸ 1912 ԹԻԱՎԱՆԻՆ**

(Հէքերից, Սզերդեց, Դիարբէքից, Մալաթիայից հարաւ և Սըւազից արեւմուտք ու հիւսիս-արեւմուտք շրջանները չեն մտնում այս ցուցակի մէջ)։

	Էրզրում	Վան	Բիքրիս	Խարբերդ	Դիարբէք.	Սըւազ	Ընդամենը	Ըստ կրօնի
<b>Մանմեղականներ</b>								
Բուրքեր . . . . .	240,000	47,000	40,000	102,000	45,000	192,000	666,000	} 1.178,000
Չէրքէզներ . . . . .	7,000	—	10,000	—	—	45,000	62,000	
Գարսիկներ . . . . .	13,000	—	—	—	—	—	13,000	
Լազեր . . . . .	10,000	—	—	—	—	—	10,000	
Գնչուներ . . . . .	—	3,000	—	—	—	—	3,000	
Նսաակեաց զիւրդեր	35,000	32,000	35,000	75,000	30,000	35,000	242,000	
Քափառակ. զիւրդեր	40,000	40,000	42,000	20,000	25,000	15,000	182,000	
<b>Քրիստոնեաներ</b>								
Հայեր . . . . .	215,000	185,000	180,000	168,000	105,000	165,000	1.018,000	} 1.183,000
Նեստորականներ	—	18,000	15,000	5,000	60,000	25,000	123,000	
Յակոբեաններ	—							
Քաղդէացիներ	—							
Յոյներ . . . . .	12,000	—	—	—	—	30,000	42,000	
<b>Չանազան կրօններ</b>								
Ղըզըլբաշներ . . . . .	25,000	—	8,000	30,000	27,000	—	140,000	} 254,000
Չաղաներ . . . . .	30,000	—	47,000	—	—	—	77,000	
Չարըքլիներ . . . . .	—	—	—	—	—	—	—	
Եգիպտիներ . . . . .	3,000	25,000	5,000	—	4,000	—	37,000	
	<b>630,000</b>	<b>350,000</b>	<b>382,000</b>	<b>450,000</b>	<b>296,000</b>	<b>507,000</b>	Ընդհ. գումար	<b>2.615,000</b>

տողոս) միշտ էլ նւիրել է երկրագործութեան ու մանր արհեստի՝ թէ թիւրքիայում, թէ Կովկասում և թէ Պարսկաստանում. հայերն ամեն բանից առաջ հողագործներ ու արհեստաւորներ են:

«Վանի վրլայէթում, ասում է Ռորբախը, հայերի ձեռքին է վաճառակաւութեան 98 տոկոսը, երկրագործութեան 80 տոկոսը: Ոսկերիչները, փորագորիչները, կահկարասի շինողները, դերձակները, կօշիկակարները, ճարտարագետները, աստղձագործները, որմնադիրները հայեր են: Աղատ պրոֆեսիաների հետևողները—բժիշկներ, իրաւաբաններ, ղեղազործներ—նոյնպէս հայեր են: Նոյնն է և միւս ասպարէզներում:

«Հայ տարրի գործունէութիւնն երևում է նաև ժողովրդական կրթութեան և դպրոցական կազմակերպութեան ասպարէզում: Հայկական դպրոցներն աւելի բազմաթիւ և աւելի լաւ են, քան Տաճկաստանում որևէ այլ ազգութեան դպրոցները. և, ինչ որ առանձնապէս պէտք է գնահատուի, նրանք շինւած են միայն կամաւոր ներատուութիւններով՝ ոչ միայն հարուստ հայերի, այլ և համեստ միջոցների տէր անհատների և չքաւոր համայնքների: Դեռ 1903 թ. Տաճկաստանում հաշուում էին 818 հայկական դպրոցներ՝ աւելի քան 82,000 երկսեռ աշակերտութեամբ: Այդ դպրոցներն ենթարկւած են Պոլսի պատրիարքաւանին: Այդ դպրոցների վրայ պիտի աւելացնել և բողոքական ու կաթոլիկ հայերի, ինչպէս և մասնաւոր անհատների դպրոցները: Միայն Տաճկահայաստանում, այսինքն վեց վրլայէթներում և Կիլիկիայում գտնուում են: Վերոյիշեալ 818 դպրոցներից 585-ը՝ 52,000 աշակերտներով. ընդհանրապէս, նոյն շրջանում կան միայն 150 տաճկական դպրոցներ՝ մօտ 17,000 աշակերտներով:»

Իրերի այդ զրուծեան և հայերի

ընդհանուր իմացական գործունէութեան և մանաւանդ աշխատանքում ցոյց տւած յարատևութեան հետևանքն է այն, որ տաճկական վարչութեան մէջ հայերի թիւը համեմատաբար մեծ է: Այդ պաշտօնեաներն այնքան շատ են և նրանց բաժին ընկնող աշխատանքն այնքան մեծ է, որ առանց հայերի, պետական մեքենան բացարձակապէս կանգ կառնէր:

Դպրոցների և աշակերտների, ինչպէս և ուսուցիչների համեմատակաւութիւնը էլ աւելի մեծ է Հայաստանի ուսակաւ մասում: Ռուսական, եւրոպական և ամերիկեան համալսարաններում հայ ուսանողների թիւը 15 000 ից անց է:

Հայերն աչքի են ընկել ինչպէս Տաճկաստանում, նոյնպէս Ռուսաստանում ու Պարսկաստանում, իրենց վարչական, դիւանագիտական ու զինւորական յատկութիւններով: Նրանք բազմաթիւ գններաւորներ են տւել ուսակաւ բանակին, մեծ վարչագէտներ Տաճկաստանին, Հունգարիային և բազմաթիւ դիւանագէտներ թիւրքիային, Պարսկաստանին ու այլ երկրներին:

Հայերն աչքի են ընկել մանաւանդ վերջին յիսուն տարւայ ընթացքում իմացական գործունէութեան բոլոր ճիւղերում—գրականութեան, գիտութեան, ղեղարւեստի մէջ, և այլն:

Վերջապէս ժամանակն է, որ հայերն օտիթ ունենան իրենց ընդունակութիւններն ի սպաս գնելու իրենց երկրին:

Հայ ժողովուրդն էապէս ղեմոկրատիկ է. նա հնուց ի վեր իր հիմնարկութիւնները կառավարել է ընտրովի կազմերով: Բացառութիւն չի կազմում և կրօնական հիերարխիան (նախկին տուրքեր), և եկեղեցու ղեռագոյն պետն իսկ ընտրուում է ամբողջ ազգի կողմից:

Մեր հայրենիքը միշտ եղել է երկու աշխարհների, երկու քաղաքակրթութիւնների—արևելեան ու արևմտեան

ՍՄԲՈՂԱ ՀԱՅ ՍԶՊԱԲԱՄԱՎ. 1914 Թ. N: 4

Հայաստանում	Տաճկաստանում	Կովկասում	Հայաստանի սահմանակից քաղաքներում	Ատրական թիւրքիայի այլ շրջաններ	Կովկասի այլ շրջաններ	Պարսկաստանում	Աւելի նոտու քաղաքներ	Պոլսում և Եւրոպ. թիւրք.	Ռուսաստան, և հիւս. Կովկ.	Եւրոպայում, Եգիպտոսում և Հնդկաստանում	Ամերիկայում	Ընդհ. գումար
	1,403,000	1,296,000		440,000	508,000	140,000		183,000	250,000	120,000	130,000	4,470,000
	2,699,000			1,088,000				683,000				

N: 4 ՍՄԲՈՂԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԶՊԱԲԱՄԱՎ. 1914 Թ.

Հայեր	Տաճկաստանի հայաստան	Կովկասի հայաստան	Քուրդեր	Քաթաներ	Քիւրդեր և թիւրք.	Հայեր, չէրքէզն, արաբ և այլն.	Չէրքէզներ, զաղա. ներ, եգիպտ. և այլն.	Ընդհ. գումար
3,211,000	1,256,000	2,699,000	65,000	512,000	1,005,000	537,000	556,000	5,860,000
3,211,000	1,256,000	2,699,000	65,000	512,000	1,005,000	537,000	556,000	5,860,000

—բաժանման կէտը: Ճիշտ այդ պատճառով է, որ Արևելքի ու Արևմուտքի մեծ ընդհարումները կատարել են նրա լեռներում կամ նրանց շուրջը և այդ պատճառով է նաև, որ Արևելքի ու Արևմուտքի մեծ պետութիւններն այնքան կարևոր են համարել տիրելու այդ շրջաններին: Ներքանք իրարից են խլել այդ շրջանները, որոնք ձեռքից ձեռք են անցել՝ անհամար պատերազմներից յետոյ: Նրանք միշտ ոտնակոխ են եղել, տւերւել, և միշտ էլ նրանց բնիկ հայ ժողովուրդն է, որ շինել է ու վերաշինել նրանց, կռուցել է և վերակառուցել, և որ չի թոյլատրել, որ որևէ մեծ պետութիւն մշտապէս հասաօտւի այդպեղ:

Հայաստանի ամբողջ պատմութիւնը մի անընդհատ, յամառ ու անհաւատար պայքար է՝ պաշտպանելու համար իր անհատականութիւնը, մշակոյթն ու կրօնը այն հզօր թշնամի պետութիւնների դէմ, որոնք յարձակում էին նրա վրայ ամեն կողմից: Նա տառապել է ամբողջ դարեր՝ պահպանելու համար իր քրիստոնէական հաւատը մահմեդական նւաճողների դէմ: Նա բռնապահ կասեցրել է ներխուժումները կենտրոնական Ասիայի բոլոր հորդանների, որոնք հեղեղանման հոսում էին դէպի Եւրոպա և վերջ ի վերջոյ խեղդեցին բիւզանդեան կայսրութիւնը:

Դարեր շարունակ՝ նա յաջողաբար յաջողել է կամ կանգուն մնալ ու թագաւորութիւններ կազմել, կամ նւաճողների լուծի տակ ընկնելուց յետոյ վերականգնիլ ու վերստանալ իր անկախութիւնը, մերթ իր հայրենիքի

այս մասում, մերթ այն մասում, նա յաճ հանգամանքների բերումին: Բայց իր ազգային թագաւորների իշխանութեան տակ, ինչպէս և օտարի լուծի տակ, այդ լեռների հարազատ տէրը, աշխատողը, արտադրողը միշտ էլ եղել է հայը, որ հայրենի հողը ոռոգել է իր արիւնով ու քրտինքով, և որի յամառ տոհմութիւնը, հեղափոխութիւնը խոչընդոտներին, հիմնել է մի հարազատ քաղաքակրթութիւն, որ արգասիքն է արևմտեան ու արևելեան երկու քաղաքակրթութիւնների խառնուրդի:

Ամբողջ Հայկական Բարձրաւանդակը, Աղանայից ու Սիսից մինչև Վան ու Երևան, ծածկւած է քաղաքների, բերդերի, եկեղեցիների, վանքերի, կամուրջների, յիշատակօրանների տակրակներով, որոնք վիշայ են նրա քաղաքակրթիչ անգագրում աշխատանքին: Պատմական, փիլիսոփայական ու բանաստեղծական մի մեծարժէք գրականութիւն, սկսած 4-րդ դարից, մի հարուստ ու ճկուն լեզու և ազգային բնոյթ կրող մի եկեղեցի—անհաթէ ինչ ժառանգութիւն է թողել մեզ այդ անխռջ իմացական աշխատանքը:

Հայ ժողովրդի դժբախտութիւնն է այն, որ առճկական բռնապետութեան հետևանքով՝ վերջին քառորդ դարու ընթացքին Արևմուտքի քաղաքակրթ ժողովուրդները նրա մէջ տեսնում են միայն մի հալածւած քրիստոնեայ ժողովուրդ, որ կարեկցութիւն է ներշնչում և օգնութեան է կարօտ: Ոչ քեկարեկցութիւն, այլ յարգանք և պահանջուում դիպի մի ժողովուրդ, որ սիրահար է աշխատանքի, ազատութեան, որ այնքան փառապալել է եւ որ այնպէս լաւ է

գիմադրել: Դժբախտաբար, հայոց պատմութիւնը շատ քիչ է ծանօթ Արևմուտքում, ուր անգիտանում են, թէ հայերն ինչ դեր են կատարել թէ՛ իրենց սեփական և թէ՛ իրենց ընկճող ժողովուրդների պատմութեան մէջ: Աւելի քիչ են ծանօթ հայերի գրական ու գեղարվեստական գործերը, որոնք սակայն ցուցահանում են մեր հոգու լուսաբոյն արտայայտութիւնները, և որոնց հայ ժողովուրդը կարող է հպարտօրէն դնել այլ քաղաքակրթ քաղաքների կողքին:

Այն ժողովուրդը, որ 30 դարերից իվեր, աւելի առաջ քան Քսենոֆոնը խօսել է նրանց մասին, մինչև այսօր ապրել է այդ բարձրաւանդակներում, հայ ժողովուրդն է. այն ժողովուրդը, որ կատարել է պատմութեան ու աշխարհագրութեան իրեն յատկացրած գերը, որ իր տարեգրութիւններում պահել է այն, ինչ արել է, և հաստատել է իր իրաւունքն այդ տերրիտորիաների վրայ, որ իւրաքանչիւր տակրուծից յետոյ շինել է ու վերաշինել, որ խորհել է ու արտագրել—զա նոյն հայ ժողովուրդն է: Բոլոր միւս տարրերն եղել են կամ բոլորովին երկրորդական իրենց թւով ու կարևորութեամբ, և կամ պատկանում են կէտբարբորոս ցեղերի, որոնք ոչ գեղարվեստ ունին, ոչ գրականութիւն, ոչ պատմութիւն, և որոնք իրենց գոյութեան ընթացքում ոչինչ չեն արել քաղաքակրթութեան համար: Ինչ վերաբերում է թուրք աշխարհականներին, որոնք սնւել են մեր արիւնով, մեր ուղեղով ու մեր քրտինքով, առանց ինքնին ոչինչ ստեղծելու, ուրիշ բան չեն, եթէ ոչ շարունակողներն

այն հորդանների, որոնք ասորեստանցիների օրերից իվեր գրաւել են ու տւերել մեր երկիրը, և որոնք ապանհետացել են պատմութեան բեմից՝ Հայկական Բարձրաւանդակը թողնելով իր բնիկ տիրօլը՝ հայ ժողովրդին:

Կովկասի ճայկական ճանրապետութիւնը

Մեր հայրենիքի հիւսիսային բնագաւանները, որոնք ընդհանուր առմամբ կաղմում են Արաքս գետի աւազանը և որոնց ռուս կառավարութիւնը 19-րդ դարու ընթացքում կըտոր առ կտոր խլեց պարսկներից ու թուրքերից, նոյնպէս էական ու անբաժան մասն են կազմում Հայկական Բարձրաւանդակի Արարատը, Գուգարքը, Արցախն ու Սիւնիքը, յայտնի հին դարերից իվեր, կազմում են Հայաստանի գլխաւոր գաւառները: Այդտեղ է, որ գտնւում էին մեր մայրաքաղաքներն և մեր այլ նշանաւոր քաղաքներից մեծ մասը, ինչպէս Արտաշատը, Վաղարշապատը, Երւանդակերտը, Դւինը, Նախիջևանը, Ղարսն ու Անին:

Միջին դարում այդտեղ էր գտնւում մեր Բագրատունեաց թագաւորութիւնը, որի մայրաքաղաք Անին իր գեական գուն տակրակներով լաւագոյն վըկան է հայկական արդիւնաբերութեան, քաղաքակրթութեան ու արեստի հասած բարձր աստիճանի: Լուսայ իշխանութիւնը տեեց մինչև 15-րդ դարու սկիզբը: Ղարաբաղում հայկական հատուրց անկախութիւնը շարունակեց մինչև առաների գալուստը. ռուսների Կովկաս մտնելու գլխաւոր ներշնչողներն եղել են Խամսայի մեկընե-

բը (իշխանները). նրանք յոյս ունէին, որ քրիստոնեայ ուսանողի օգնութեամբ՝ հայերը կազատեն մահմեդական լուծից, և հաւատում էին ուսաց թաւաւորների խօսքերին, որոնք նրանց խոստանում էին վերականգնել հայկական անկախ իշխանութիւնը գրաւած հողերի վրայ: Մինչև այսօր էլ այնտեղ, Էջմիածնում և գտնուում կաթողիկոսի, բոլոր հայերի հոգևոր պետի աթոռը, հիմնուած 3 ռդ դարում, Հայաստանի քրիստոնէութիւնն ընդունելուց անմիջապէս յետոյ: Այդ գաւառների ազգաբնակչութեան ամենակարևոր տարրը, թուով ու գրաւած գիրքով, հայն է (տես № 3 ցուցակը): Քանի որ պատերազմի ու հաշտութեան նպատակներից մէկն է այն, որ ճնշւած ժողովուրդներին իրաւունք է տրուում անձամբ վճռելու իրենց սեփական ճակատագիրը և որ այդ ր-

կըզբունքն ընդունուած է իրար յաջորդող ուսական զանազան կառավարութիւնների կողմից. քանի որ Թիւրքիայի տապալումով Հայաստանի մեծագոյն մասն ազատուած է, — այլևս անհնար է Ռուսաստանին թողնել Հայաստանի մի կարևոր մասը՝ այն միակ պատճառով, որ այդ գաւառները մի քանի տասնեակ տարիներից ի վեր գտնուում էին ուսանողի տիրապետութեան տակ. մանաւանդ որ, 1917 թրւականի վերջից ի վեր, ամբողջ Կովկասը գործնականապէս ու իրապէս բաժանուած է եղել Ռուսաստանից՝ կազմելով Կովկասեան հանրապետութիւն: Վերջինս քիչ յետոյ բաժանւել է երեք մասերի՝ ազգութիւնների իրաւունքի հիման վրայ: 1918 թ. մայիսին հայոց ազգային ժողովը Ռուսաստանի եկու միլիոն հայութեան անունով յայտարարեց, որ ուսական

Հայաստանը դառնում է անկախ կանաւետութիւն՝ մայրաքաղաք ունենալով Երևանը: Այնտեղ կազմեց մի կանոնաւոր կառավարութիւն, ինչպէս և մի բանակ, որ ձգնել է ամեն կերպ կասեցնել Թիւրքական բանակի առաջխաղացութիւնը դէպի Ղարս՝ ուսական բանակների քայքայումից յետոյ, որոնք ցրել էին հայերին բոլորովին մենակ թողնելով իրենց դարաւոր թշնամիների դէմ:

Իրենց ճակատագրին թողնելով հայերին, չնայած սրանց բոլոր թախանձանքներին, միայն նրանց ժառանգութիւն թողնելով մի պատերազմ, որը վարելը վեր էր հայերի ոյժից, Բրեստ Լիտովսկի պայմանագրով (և առանց նոյն իսկ մեզ հետ խորհրդակցելու) Թիւրքիային յանձնելով Կովկասի հայկական Ղարս, Արդահան ու Կազզան գաւառները, և այդ կերպով պատճառ դառնալ վ հարիւր հազարաւոր հայերի քայքայումին, — Ռուսաստանը իր արարքներով իսկ ընդմիջտ խզեց իր և Հայաստանի միջև կապերը: Մնաց որ, միացեալ Լեհաստանի ստեղծումից, ուսանողիների կողմից Բեսարաբիայի գրաւումից, Ֆինլանդիայի կատարեալ անկախութիւնից, Ուկրաինական և այլ պետութիւնների կազմութիւնից յետոյ՝ ուսական կայսրութեան ամբողջականութեան փաստարկութիւնը չի կարող մէջ բերել: Ուստի արդարութեան բացասումը կը լինէր տաճկական Հայաստանի հին տերրիտորիաները բաժանել Ռուսաստանի տերրիտորիաներից՝ ինչ պատրուակներով և ինչ ձևերով էլ որ լինի. դա կը նշանակէր, այսպէս ասենք, կտրատել մի կենդանի մարմին, և ստեղծել մի մնայուն պատճառ նոր կալածանքների, նոր ճնշումների և նոր արիւնհեղութիւնների:

Կովկասեայերից շատերը, նրանք կամ նրանց հայրերը, եղել են սուլթանի հպատակներ՝ մինչև 1894 — 1896 թւականների կոտորածները. այդ ժամանակաշրջանում նրանք փախել են դէպի ուսական տերրիտորիան: Միւս կողմից, կովկասեայերն այնքան աուժած չլինելով վերջին կոտորածներից, որքան Թիւրքիայի իրենց եղբայրները, կը կարողանան Հայաստանին հայթայթել սկզբնական շրջանում պակասելիք տարրերը՝ ստեղծելու համար վարչութիւնը և ազդակ դառնալու տնտեսական բարգաւաճման: Տաճկաստանի եղբայրակիցներից նրանց բաժանելը կը լինէր փտելու դատապարտել նրանց ու աւելի ծանրացնել այն պետութեան գործը, որ պիտի ունենայ Հայաստանի վերակառուցման օգնելու ժամանակաւոր առաքելութիւնը: Պետրիւններն ի՞նչպէս կարող են բնդիլմանալ մի իրօյութեան, որ արդէն կատարուած է, եւ կատարելապէս համաձայն է այն սկզբունքներին, որոնց հիման վրայ է կնկնելու հաստատութեան դաւանագիրք:

Ռուսահայերը վերջին դարու ամբողջ կէսին իրենց ֆիզիքական ու բարոյական ոյժերի լաւագոյնը զոհաբերել են Տաճկա-Հայաստանի դատին, որովհետև հասկանում էին, որ իրենց ազատագրման ճանապարհն անցնում էր Տաճկաստանի միջով: Ամբողջ սերունդների ապրել են Տաճկա-Հայաստանն ազատելու երազով: Եւ ճիշտ այդ պատճառով է, որ ուսահայերը, պատերազմը յայտարարելուն պէս, խանդավառօրէն մտան ուսական, Քրանսիական ու անգլիական զորջների տակ և միանալով տաճկահայերին՝ կազմեցին կամաւորական բանակներ, այդ կերպով ապացուցելով, որ օտար պետութիւնների դժած արհեստական

**№ 5 ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ** № 5  
 Բուլղարիայի եւ Հայաստանի երկսեռանայ ու մահմեդական ազգաբնակչութիւնների՝ նրանց ազատագրման նախօրեակին

Բուլղարիայի ազգաբնակչութիւնը 18 6 թ. նախքան տոճական լծից ազատելը		Հայկական զեց նահանգ՝ Ե. Ի. Ը՝ ա չութիւնը 1914 թւա տ ին	
Բուլղարներ	1,130,000	Հայեր	1,018 000
Յոյներ	12,000	Յոյներ	42,000
Հայեր	2,500	Նիստորականներ	123 000
Վալախներ և այլն	65,000	Ղրղը բաշներ	140 000
Քրիստոնեաների ընդհ. թիւ	1,209 500	Ձաղաներ և այլք	77 000
Գնչուներ	12 000	Եզիզիներ	37 0 0
Հրէաներ	12 000		
Ընդհ. գումար	1,233 500	Գումար	1,437,000
Թուրքեր	774,000	Թուրքեր	666,000
Հնուց գաղթ. թաթարներ	110 000	Քիւրդեր	424, 00
Չէրքէզներ	200,0 0	Այլ մահմեդականներ	88,000
Մահմեդականների գումար	1,119 000	Ընդամենը	1,178 000
Ընդհ. գումար	2,352 500	Ընդհ. գումար	2.615,000



սահմանն անդոր է անջատելու այդ անբաժան ամբողջութիւնը, որ կապ-  
ւած է ընդհանուր արիւնով, ոգով,  
լեզուով, անցեալով, ներկայով, ապա-  
գայով և այնքան շահերով:

Յանուն արդարութեան, յանուն  
մեր դարաւոր իրաւունքի, յանուն  
Ռուսաստանի և Տաճկաստանի երկու

հայ համայնքների անդիմադրելի տեն-  
չիրի, յանուն այն պատմական անընկ-  
ճելի անհրաժեշտութեան, որ վաղ թէ  
ուշ պէտք է յաղթանակէ, մենք պա-  
հանջում ենք նոյն ազգի երկու հատ-  
ւածների բացարձակ ու վերջնական  
միացումը:

**№ 2 ԵՕԹ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԻ ԵՒ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ**  
1914 թվականին

	7 ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ Տիգրիսից հարաւ և Նշիւ Լըմակ ց ա- րևմուտք շրջան- ներն առանց հաշ- ւելու	ԿԻԼԻԿԻԱՅԻ Մար շի, Սո- զանի և Զէ- բէլ Բէրէբէ- թի սանջակ- ները	Գումար	
Հայեր . . . . .	1.198.000	205.000	1.403.000	} 1.850.000 քրիստո- նեաներ
Յոյներ . . . . .	242.000	40.000	282.000	
Նեստորական, Յակոբեան, քաղղէացի և եւրոպա- ցիներ . . . . .	124.000	41.000	165.000	
Քուրդեր . . . . .	865.000	78.000	943.000	} 1.635.000 մահմադա- կաններ
Քիւրդեր . . . . .	424.000	58.000	482.000	
Լազեր, չէրքէզներ, արաբ- ներ, պարսիկներ . . . . .	190.000	20.000	210.000	
Ղրղըւթներ, եղիզիներ, Ֆէլլաններ և այլն . . . . .	255.000	48.000	303.000	309.000 զանազան կրօններ
	<b>3.298.000</b>	<b>490.000</b>	<b>3.788.000</b>	

**Տահկասանում հայերի թիւը 1914 թվականին**

Տաճկա-Հայաստանում . . . . .	1.403.000
Ասիական Քիւրդիայի այլ մասերում . . . . .	440.000
Գոյում և Նւրսպական Քիւրդիայում . . . . .	183.000
<b>Ընդամենը</b>	<b>2.026.000 հայեր</b>



2007

ԳԻՆՆ Է 5 ՐՈՒՔԼԻ